# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/42» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«09» նոյեմբերի 2018թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Ավետիք Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ Գ Դ/ԳԱՊ) Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար.

*հանձնաժողովի անդամներ՝*

**Հովհաննես Ստեփանյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Գրիգոր Գաբրիելյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար:

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Լիլիթ Հովհաննիսյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻԾ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1. Տեղեկատվություն՝ արձանագրված անհամապատասխանությունը «Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից շտկելու վերաբերյալ.**

«Սմարթլայն» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.**

Ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը՝ հանձնաժողովը որոշեց, որ «ՍՈՒԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի, «Սմարթլայն» ՍՊԸ-ի, Դավիթ Քոչարյան Ա/Ձ-ի, «ՍԱՔՕ» ՍՊԸ-ի, «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

3. Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունները՝ «ԱՈՒԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի, «Սմարթլայն» ՍՊԸ-ի, Դավիթ Քոչարյան Ա/Ձ-ի, «ՍԱՔՕ» ՍՊԸ-ի, «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը և ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատվում են բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Գնահատող անձնաժողովը որոշեց՝

1. հաստատել հայտերի գնահատման արդյունքները և

-1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Ծուշան Տեխնիկս» ՍՊԸ-ին.

-2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել Դավիթ Քոչարյան Ա/Ձ-ին,

-8-րդ, 14-րդ, 17-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին,

-9-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Սմարթլայն» ՍՊԸ-ին.

-19-րդ, 20-րդ, 21-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «ՍԱՔԻ» ՍՊԸ-ին:

2. հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),

3. գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0.*

Հանձնաժողովի

Նախագահ — Ավետիք Ավագյան

Անդամներ՝

Հովհաննես Ստեփանյան

Գրիգոր Գաբրիելյան

Էդգար Տոնականյան

Լիլիթ Հովհաննիսյան

Քարտուղար՝ — Արուս Խաչատրյան